# ԵԶՐԱՓԱԿԻՉ ԶԵԿՈՒՅՑ

**«Հայաստանում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելում և արգելում. ներկա իրավիճակը և հեռանկարները»**
**կլոր սեղանի**

Ս.թ. հուլիսի 13-14-ին ՀՀ Կառավարության և ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի համագործակցության շրջանակներում ՀՀ ԱԳՆ-ի, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Երևանում ԵԱՀԿ-ի գրասենյակի կողմից կազմակերպվեց կլոր սեղան «Հայաստանում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելում և արգելում. ներկա իրավիճակը և հեռանկարները» խորագրով:

Կլոր սեղանի աշխատանքներին մասնակցեցին պաշտոնյաներ ՀՀ ԱԺ-ից, ՀՀ կառավարությունից, ՀՀ ներքին գործերի, ՀՀ արդարադատության, ՀՀ արտաքին գործերի ՀՀ պաշտպանության նախարարություններից, գլխավոր դատախազությունից, ռազմական ոստիկանությունից, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Կլոր սեղանի օրակարգի հիմնական կետերը հետևյալն էին.

1. Միջազգային կազմակերպությունների շրջանակներում խոշտանգումների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված միջազգային պայմանագրային գործընթացներ,
2. ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի գործունեությունը,
3. ՀՀ պարտավորությունները Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում խոշտանգումների վերացման համատեքստում,
4. ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեին Հայաստանի կողմից ներկայացվող համապատասխան ազգային զեկույցի նախապատրաստումը և պաշտպանությունը,
5. Խոշտանգումների կանխարգելումը և վերացումը Հայաստանում տեղի ունեցող դատահիրավական բարեփոխումների լուսո ներքո, առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները,
6. «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» Եվրոպական կոնվենցիան,
7. Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում գործող հասարակական կազմակերպությունների դերը խոշտանգումների դեպքերի կանխարգելման և պատշաճ հետաքննման գործում:

Կլոր սեղանի հիմնական նպատակներից էր քննարկել Հայաստանում խոշտանգումների կանխարգելման և վերացման ապահովման համար անհրաժեշտ միջոցառումները և դրանց իրականացման միջոցները:

Քննարկումների ընթացքում նշվեց, որ դժբախտաբար, Հայաստանում խոշտանգումների, և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքեր կան: Միաժամանակ նշվեց, որ այդ երևույթի կանխարգելման և վերացման ուղղությամբ որոշակի աշխատանք կատարվել է, մասնավորաբար, օրենսդրության բարեփոխման ոլորտում: Ներկա փուլում աշխատանքներն ավարտված չեն և այդ ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել սերտ համագործակցություն բոլոր շահագրգիռ կառույցների միջև:

Եզրափակիչ լիագումար նիստում ամփոփվեցին երկու աշխատանքային խմբերի արդյունքները և ընդունվեցին հետևյալ առաջարկությունները՝

- **Օրենսդրական բարեփոխումների ոլորտում արագացնել հետևյալ օրենքների մշակումը և ընդունումը՝ միջազգային չափանիշներն ամբողջովին արտացոլելու և խոշտանգումների ու արժանապատվությունը նվաստացնող այլ ձևերի դեմ երաշխիքներ ապահովելու նպատակով.**

1. Պետական ծառայության մասին ՀՀ օրենք,
2. ՀՀ Քրեական օրենսգիրքը,
3. Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) մասին ՀՀ օրենք,
4. ՀՀ քրեակատարողական ծառայության մասին ՀՀ օրենք,
5. Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենք,
6. Այլընտրանքային ծառայության մասին ՀՀ օրենք,
7. ՀՀ Քրեակատարողական օրենսգիրք:

Մարդու իրավունքների պաշտպանության և խրախուսման տեսանկյունից խիստ կարևոր է, որպեսզի Հայաստանի Հանրապետությունը «Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ» Կոնվենցիայի 22-րդ հոդվածով հայտարարություն անի այն մասին, որ ճանաչում է խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեի իրավասությունը՝ ստանալու ու քննարկելու այն անձանց անհատական դիմումները, ովքեր գտնում են, որ տեղի է ունեցել վերը նշված Կոնվենցիայի որևէ դրույթի խախտում:

Անհրաժեշտ է ներգրավել հասարակական կազմակերպություններին օրենքների մշակման գործընթացում:

- **Իրավապահ մարմինների ենթակայության տակ գտնվող կառույցներում ինչպես նաև բանակում տիրող իրավիճակը բարելավելու նպատակով ձեռնարկել հետևյալ միջոցները.**

1. Քննարկել հասարակական դիտորդների ինստիտուտի ստեղծման հնարավորության հարցը, դրանով ապահովելով իրավապահ կառույցների գործունեության թափանցիկության բարձրացումը,
2. Ազատազրկման վայրերում ապահովել սոցիալ-հոգեբանական և այլընտրանքային բժշկական օգնության տրամադրման հնարավորությունը,
3. Որոշակիացնել ռազմական ոստիկանության կարգավիճակը և դրա համակարգում գործող «ընդունիչ-բաշխիչ» կետերի օրինականությունը,
4. Մշակել բողոքների քննարկման, դրանց վիճակագրական տվյալների ամփոփ համակարգման և արդյունավետության բարձրացման մեխանիզմները:

- **Մարդու իրավունքների պաշտպանության և մասնավորապես խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերի կանխարգելման և արգելման նպատակով հասարակության իրազեկության և իրավագիտակցության, մասնավորապես օրինազանց գործողությունների համար պատժի անխուսափելիության սկզբունքի կիրառման ուղղությամբ կազմակերպել ուսումնական դասընթացներ, բաց քննարկումներ և սեմինարներ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ**

1. Իրավապահպան մարմինների բոլոր օղակների աշխատակիցների և իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար,

2. Դատաբժշկական փորձագետների և փաստաբանների համար,

3. Միջազգային կազմակերպությունների աջակցությամբ ապահովել Մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ համապատասխան միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը, անհրաժեշտ փաստաթղթերի թարգմանությունը, հրատարակումը և տարածումը:

- **ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեին ներկայացվող ՀՀ ազգային պարբերական զեկույցների պատրաստման գործընթացում ապահովել բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությունը:**

- **Մարդու իրավունքների մշակվող ազգային ծրագրի մեջ նախատեսել առանձին բաժին Հայաստանում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման և արգելման վերաբերյալ:**

- **Որպես կլոր սեղանի հետագա գործողություն, ինչպես նաև սույն Եզրափակիչ զեկույցում տեղ գտած առաջարկությունների իրագործման ուղղությամբ և մեկ տարվա ընթացքում իրականացված ծրագրերի գնահատման նպատակով**

հաջորդ տարվա ընթացքում կազմակերպել ևս մեկ հանդիպում՝ նվիրված կլոր սեղանի շրջանակներում քննարկված հարցերին: